



ԱՇԳԱՅԻՆ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՏԻՆ ՖԱՀՐԱՂՅԱՆ

ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնի պրոֆեսոր,
տնտեսագիտության թեկնածու

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ժողովրդագրական անվտանգությունը ազգային անվտանգության կարևորագույն տարրն է, քանի որ ընդգրկում է հասարակության կենսագործունեության բոլոր բնագավառները: Աշխատանքում ներկայացվել է «Ժողովրդագրական անվտանգություն», «վտանգներ» և «իրավունք» հասկացությունների տնտեսագիտական բովանդակությունը: Հիմնավորվել է վիճակագրական, ժողովրդագրական ցուցանիշների համակարգը, որի օգնությամբ հնարավոր է գիտականորեն գնահատել, բացահայտել ժողովրդագրական իրադրության հիմնախնդիրները: Դրանք կարգավորելու նպատակով առաջադրվել է ժողովրդագրական և միգրացիոն քաղաքականության իրականացման որոշակի միջոցառումների հայեցակարգ:

Հիմնաբառեր. ժողովրդագրական անվտանգություն, վտանգներ, իրավունք, իրադրություն, հայեցակարգ, վիճակագրական ցուցանիշների համակարգ, քաղաքականություն, միգրացիա, ընտանիքի պլանավորում

JEL: C4, C49, J11

Ազգային անվտանգությունն ընդգրկում է հասարակության կենսագործունեության բոլոր բնագավառները: Մասնագետների ճնշող մեծամասնության կարծիքով «Ազգային անվտանգության հայեցակարգը» ներառում է ժողովրդագրական, տնտեսական, սոցիալական, քաղաքական, ռազմական,

մշակութային և անվտանգության այլ տեսակների ամբողջությունը¹:

Ժողովրդագրական ընթացիկ, բացասական միտումները և գործընթացները հարկ է դիտարկել ոչ միայն հասարակության կայուն զարգացման ժամանակակից փուլում, այլ նաև հեռանկարում՝ որպես իրական և հավանական վտանգներ: Այդ առումով պետք է հաշվի առնել, որ ժողովրդագրական հիմնախնդիրների լուծումը շատ բարդ առաջադրանք է, պահանջում է նպատակաուղղված միջոցառումներ՝ նկատի ունենալով այդ գործընթացների իներցիոն բնույթը, ցանկալի արդյունքների հասնելու երկարատևությունը, նշանակալի ֆինանսական ռեսուրսների անհրաժեշտությունը: Բացի նշվածից, անհրաժեշտ է ժողովրդավարության բնագավառում մշակել երկարատև պետական քաղաքականության հայեցակարգ՝ նպատակաուղղված այդ բնագավառի անվտանգության ապահովմանը:

«Անվտանգություն» հասկացությունը ենթադրում է ոչ միայն օբյեկտի նորմալ վիճակի պաշտպանություն դրա վրա ազդող գործոններից, որոնք վտանգում են կենսագործունեությունը, այլև այդպիսի իրավիճակի վերականգնում: Հետևաբար՝ անվտանգության խնդիրը մի կողմից՝ օբյեկտի շահերի պաշտպանությունն է գոյություն ունեցող վտանգներից, իսկ մյուս կողմից՝ այդ վտանգների ներգործության չեզոքացումը: Հետևաբար՝ «Ժողովրդագրական անվտանգություն» հասկացությունը սահմանում ենք որպես կյանքի հիմնական, կարևորագույն ժողովրդավերարտադրողական գործընթացների պաշտպանություն իրական և հավանական վտանգներից: Այսպիսով՝ ժողովրդագրության բնագավառում անվտանգությունն արտահայտվում է մի կողմից՝ վերարտադրողական գործընթացներում առկա բացասական միտումների, պատճառների, դրանց հետևանքների առավելագույն նվազեցմամբ, մյուս կողմից՝ դրանց առաջացման պատճառների բացահայտմամբ և չեզոքացմամբ:

Ժողովրդագրական վտանգները երևույթներ և միտումներ են, որոնց ծագման և զարգացման հետևանքով բնակչության զարգացման գործընթացում տեղի են ունենում քանակական և որակական բացասական փոփոխություններ, որոնք անդրադառնում են երկրի կայուն զարգացման վրա:

Ժողովրդագրական իրավունքը մարդու իրավունքների ամբողջությունն է՝ արժանավայել կյանքի իրավունք էկոլոգիապես անվտանգ միջավայրում, առողջապահության բնագավառում ծառայությունների և հնարավոր տեղեկատվության ստացման իրավունք՝ ներառյալ վերարտադրողական առողջությունը, ընտանիքի պլանավորման իրավունք, բնակության տեղի ընտրության իրավունք: Ընտանիքի պլանավորման ժողովրդագրական իրավունքը ներառում է ամուսնական զույգերի և առանձին անձանց իրավունքը ազատ և պատասխանատվության զգացմամբ որոշելու իրենց երեխաների թիվը և ծնելու ժամանակը, ունենալու տեղեկատվություն և միջոցներ, որոնք հնարավորություն կտան դա իրացնելու:

¹ Տե՛ս **Вишневский А.Г.**, Демографическая революция. М., «Статистика», 1976, 432 էջ: **Рыбаковский Л.Л., Захарова О.Д.**, Демографическая ситуация в России: геополитические аспекты /РАН. Ин-т соц.-полит. исслед., Центр демографии. М., 1997, 28 էջ: **Анисов Л.М., Провалова Н.Н., Шахотько Л.П.**, Демографические аспекты национальной безопасности, «Белорусский экономический журнал», №4, 2000: **Римошевская И.**, Человеческий потенциал и угрозы национальной безопасности, «Власть», №10, 2000, էջ 37-45: **Эпштейн Н.Д., Егорова Е.А., Карманов М.В.** и др., Методология анализа демографической безопасности и миграции населения. М., «Финансы и статистика», 2013, 165 էջ:

Ժողովրդագրական անվտանգության մակարդակի վիճակագրական գնահատման հայեցակարգում կարող ենք ներառել մեկ կամ մի քանի ընդհանրացնող ցուցանիշներ:

Ժողովրդագրական անվտանգությունը գնահատելիս բազմաթիվ հեղինակներ որպես որոշակի ցուցանիշների քանակական գնահատման հիմք են ընդունել առանձին սանդղակների մեծությունները (Գ.Սունդբերգի² բնակչության տարիքային կառուցվածքի դասակարգման տիպերը, Է. Ռոսետի³ ծերացման գործընթացի գնահատման սանդղակները, ինչպես նաև տարբեր հեղինակների՝ ծննդի և մահացության ինտենսիվության գնահատման սանդղակները⁴):

Տարբեր հեղինակների կողմից վիճակագրական մեկ ցուցանիշի ընդունումը դժվարացնում է ժողովրդագրական իրադրության առանձին կողմերի և տեսանկյունների բազմակողմանի բացահայտումը:

Ժողովրդագրական անվտանգության լիարժեք ուսումնասիրությունը անհնար է իրականացնել մեկ կամ մի քանի վիճակագրական ցուցանիշների ուսումնասիրությամբ: Բազմակողմանիորեն գնահատելու և հեռանկարային կանխատեսումներ իրականացնելու համար անհրաժեշտ է օգտագործել վիճակագրական ցուցանիշների ամբողջ համակարգը, և, հնարավոր է՝ ժողովրդագրական իրադրության զարգացման այս կամ այն ժամանակահատվածում հաշվարկվող ցուցանիշների համակարգում առաջնություն ստանա մեկ կամ մի քանի ցուցանիշների համակցություն:

Ժողովրդագրական անվտանգության վիճակագրական ցուցանիշների օգնությամբ իրականացվում է տվյալ ժամանակաշրջանում ժողովրդագրական իրադրության դիագնոստիկան (ախտորոշում): Դա արտահայտում է առավել ակնհայտ ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, իրավական, ազգային, էկոլոգիական տեսանկյունները. «..... նշվածներից ամեն մեկը վերաբերում է որոշակի համակարգագոյացման կապերի տեսակին, այս կամ այլ ենթահամակարգերին»⁵: Այդպիսի չափորոշիչները գնահատելիս օգտագործվում է վիճակագրական ցուցանիշների համակարգը, որի օգնությամբ ամբողջությամբ՝ լրիվ և ճիշտ են բնութագրվում ժողովրդագրական գործընթացներն ու բնակչության որակական զարգացումը:

Ակնհայտ է, որ առանց ժողովրդագրական անվտանգության հիմնական չափորոշիչների և դրանց փոխադարձ կապի առանձնացման անհնար է ձևավորել որոշակի հիմք՝ ուսումնասիրվող օբյեկտի վերաբերյալ համընդհանուր, բազմակողմանի գնահատական ստանալու համար: Մյուս կողմից՝ հատկապես ցուցանիշների համակարգն է հնարավորություն ընձեռում ստանալու ամբողջական, համընդգրկուն պատկերացում ժողովրդագրական անվտանգության իրավիճակի մասին և մշակելու ինտեգրալ չափորոշիչների համակարգ:

Համակարգային մոտեցումը արդյունավետ է նաև այն առումով, որ թույլ է տալիս խուսափել սահմանափակությունից, որը բնորոշ է մեկ մասնակի չա-

² Տե՛ս **Россет Э.**, Процесс старения населения. М., 1968, էջ 60-61:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 69:

⁴ Տե՛ս **Стеценко С.Г., Казаченко И.В.**, Демографическая статистика. Киев, 1984, էջ 133, 152, 261, 265: **Мерков А.М., Сухаребский Л.И.**, Статистика на службе народного здоровья. М., 1968, էջ 48: **Урланис Б.Ц.**, Рождаемость и продолжительность жизни в СССР. М., 1963, էջ 95, 96: Статистика населения с основами демографии. М., 1990, էջ 132: **Ястремский Б.С.**, Связь между показателями воспроизводства населения. ВКН. Избранные труды. М., 1964, էջ 383-384: **Пресса Р.**, Народонаселение и его изучение. М., 1966, էջ 335:

⁵ Տե՛ս **Федоров Г.Н.**, Геодемографическая обстановка. Ленинград, 1984, էջ 60:

փորոշին: Օրինակ՝ երբ մի երկրում դիտվում է բնակչության երկու տոկոսանոց տարեկան հավելաձ, իսկ մյուս երկրում արձանագրվում է նույն ցուցանիշը, բայց բացասական տեսանկյունից, ապա շատ դժվար է քննարկել, գնահատել ժողովրդագրական անվտանգության մակարդակի ճշմարիտ, իրական պատկերը, քանի որ մարդկային ընդլայնված վերարտադրությունը ոչ բոլոր դեպքերում է բարիք. որոշակի սահմանափակումների (փոքր տարածք, մանկական, նախադպրոցական հիմնարկների զարգացման ոչ բավարար մակարդակ, աշխատատեղերի բացակայություն) պայմաններում կարող է հանգեցնել բացասական հետևանքների:

Եթե ցուցանիշների համակարգը կայուն է և, առանց բացառության, ընդգրկում է ժողովրդագրական անվտանգության բոլոր (նույնիսկ տվյալ ժամանակաշրջանում երկրում բացակայող) տարբերակները, ապա երաշխավորում է ժողովրդագրական անվտանգության գնահատման, համեմատության և համադրման ընդհանրացնող և մասնակի կողմերը՝ որոշակի ժամանակի և տարածության տեսանկյունից:

Ժողովրդագրական գործընթացները գնահատելու համար հաճախակի օգտագործվում է ծննդի և մահացության մակարդակների հարաբերակցությունը, միգրացիայի մնացորդը, այդ թվում՝ ըստ քաղաքային և գյուղական տարածաշրջանների, բնակչության սեռատարիքային կառուցվածքը և այլն: Նման դեպքերում կարևորվում են ոչ թե այդ ցուցանիշները, այլ դրանց ելակետային մակարդակները, նշանակությունները, սահմանային մեծությունները: Այդ մակարդակների չապահովումը խաթարում է վերարտադրողական գործընթացների բնական զարգացումը, հանգեցնում է բացասական միտումների ձևավորման:

Հաշվի առնելով վերը նշվածը, տարբեր հեղինակների տեսակետները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում տնտեսության զարգացման ներկայիս մակարդակը, ժողովրդագրական իրադրության առանձնահատկությունները՝ առաջարկում ենք ժողովրդագրական անվտանգության գնահատման հետևյալ ցուցանիշների համակարգը.

Աղյուսակ 1

Ժողովրդագրական անվտանգության վիճակագրական ցուցանիշների համակարգը և չափորոշիչները

N	Ցուցանիշներ	ՀՀ-ում ցուցանիշի մեծությունը 2015 թ.	Սահմանային կրիտիկական նշանակությունը	Հավանական սոցիալ-տնտեսական հետևանքները
1	2	3	4	5
1.	Ծնելիության ընդհանուր գործակիցը	13,1	տնտեսապես զարգացած երկրների մակարդակը	ապահովվում է սերունդների պարզ վերարտադրությունը
2.	Ծնելիության գումարային գործակիցը (15-49 տարեկան մեկ կնոջ հաշվով)	1,65	2,14 – 2,15	բացակայում է սերունդների պարզ փոխարինումը
3.	մահացության ընդհանուր գործակիցը	9,3	տնտեսապես զարգացած երկրների մակարդակը	ցածր մակարդակ. բարձրանում է մահացության ինտենսիվությունը
4.	բնակչության մահացության պայմանական գործակիցը (մահացածների և ծնվածների թվերի հարաբերությունը)	64,4	1,0	ինտենսիվ մահացություն. մահացության տոկոսն ավելի բարձր է, քան ծնվածներինը

5.	մանկական մահացության գործակիցը	8,8	տնտեսապես զարգացած երկրների մակարդակը	նվազում է երեխաների թիվը
6.	մայրական մահացության գործակիցը 100 000 կենդանի ծնվածի հաշվով	19	տնտեսապես զարգացած երկրների մակարդակը	դիտարկվում է նորածինների առողջության վատթարացում, որբացում
7.	մահացությունն ըստ մահվան հիմնական պատճառների (%-ով՝ ընդհանուրի նկատմամբ) - արյան շրջանառության համակարգի հիվանդություններ - նորագոյացություններ - շնչառական օրգանների հիվանդություններ - այլ պատճառներ	47,9 20,6 6,7 24,8	տնտեսապես զարգացած երկրների մակարդակը -/- -/- -/-	նվազում է երկրի բնակչության կենսագործունեությունը -/- -/- -/-
8.	առաջիկա կյանքի միջին տևողությունը (տարի) - ընդամենը - տղամարդիկ - կանայք	75,0 71,7 78,2	տնտեսապես զարգացած երկրների մակարդակը	նվազում է երկրի բնակչության կենսագործունեությունը
9.	բնակչության ծերացման ցուցանիշը	16,2	15,0	բնակչությունը ծերացած է, նվազում է բնակչության կենսամակարդակը
10.	առաջին ամուսնության միջին տարիքը (տարի) - տղամարդ - կին	29,8 26,9	տնտեսապես զարգացած երկրների մակարդակը	ընտանիքում կարգավորվում է երեխաների թիվը
11.	բնական հավելածի գործակիցը (%)	4,6	տնտեսապես զարգացած երկրների մակարդակը	ապահովվում է բնակչության պարզ վերարտադրությունը
12.	վերարտադրության - համախառն - մաքուր գործակիցները	0,776 0,746	1,0 1,0	չի ապահովվում կանանց սերնդի պարզ վերարտադրությունը
13.	բնակչության վերարտադրության արդյունավետությունը (մաքուր և համախառն գործակիցների հարաբերությունը (%))	0,96	տնտեսապես զարգացած երկրների մակարդակը	-/-
14.	աշխատունակ տարիքի անձանց ծանրաբեռնվածությունը	509	տնտեսապես զարգացած երկրների մակարդակը	նվազում է բնակչության կենսամակարդակը
15.	միգրացիայի մնացորդի գործակիցը ($\pm$), ‰	-8,6	0	նվազում է բնակչության թիվը

Աղյուսակում ներկայացված ցուցանիշների համակարգը հնարավորություն է տալիս ժողովրդագրական անվտանգության վերաբերյալ ստանալու մանրամասն ու բազմակողմանի տեղեկատվություն: Այլ կերպ ասած՝ նշված ցուցանիշների համակարգն ընդգրկում է ավանդական և հայտնի չափորոշիչները, որոնք միկրո- և մակրոմակարդակներում հաշվարկվում են վիճակագրական և ժողովրդագրական տարեգրքերում: Նման մոտեցումը թույլ է տալիս ժողովրդագրական անվտանգությունը դիտարկել որպես հասարակության սոցիալ-տնտեսական արդյունավետ զարգացման կարևորագույն տարր և պայման:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության իրական ժողովրդագրական վտանգների թվին է դասվում ցածր ծնելիության մակարդակը, որը չի ապահովում բնակչության պարզ վերարտադրություն: Հանրապետությունում ծննդի գումարային գործակիցը, մեկ կնոջ հաշվով, 1990 թ. 2.62-ից նվազել է՝ 2015 թ. հասնելով մինչև 1.65-ի: Բնակչության պարզ վերարտադրության մակարդակը, ըստ այդ ցուցանիշի մեծության, համապատասխանում է վերարտադրողական տարիքի մեկ կնոջ հաշվով 2.1 երեխայի: Հետևաբար՝ ծննդի մակարդակի նվազումը նշված մակարդակից ցածր, գնահատվում է որպես կրիտիկական, որը հետագա տարիներին հանգեցնելու է բնակչության «մահացության գործընթացի»: Արդյունքում՝ 2015 թ. ծնված երեխաների թիվը կազմել է 43.0 հազար կամ 1990 թ. մակարդակի 54%-ը: Ծննդի ընդհանուր գործակիցը նշված ժամանակաշրջանում 22.5 պրոմիլից նվազել է մինչև 14.3 պրոմիլի⁶:

Առաջադրվող թեզը մեկ անգամ ևս հաստատվում է, քանի որ վերջին տարիներին մոր միջին տարիքը բարձրացել է ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ երեխայի ծննդյան պարագայում՝ պայմանավորված տղամարդկանց և կանանց առաջին ամուսնության միջին տարիքի բարձրացմամբ: Այսպես՝ եթե 1990 թ. մոր միջին տարիքը առաջին երեխայի ծննդյան ժամանակ 22.8 էր, ապա 2015 թ.՝ 24.3: Նույն ժամանակաշրջանում տղամարդկանց առաջին ամուսնության տարիքը 26.6-ից բարձրացել է 29.4-ի, իսկ կանանց տարիքը՝ 22.4-ից 26.3-ի⁷: Բերված վիճակագրական տվյալները մեկ անգամ ևս հաստատում են, որ հեռանկարում ծննդի ինտենսիվության մակարդակը ունենալու է նվազման միտում:

Ջարգացած երկրներում բնակչության առողջության մակարդակը գնահատելու համար վիճակագրական ցուցանիշների համակարգում օգտագործվում են սպասվելիք առաջիկա կյանքի միջին տևողության, մանկական, ինչպես նաև մայրական մահացության տվյալները: ՀՀ-ում առաջիկա կյանքի միջին տևողության սահմանային մեծությունը չպետք է ցածր լինի 2015 թ. համապատասխան մակարդակներից: Հանրապետությունում հետագա տարիներին ծննդի ինտենսիվության մակարդակի նվազումը, ինչպես նաև բնակչության ծերացման ընթացքի արագացումը, հիվանդացությունների կառուցվածքային փոփոխությունները չեն նպաստելու առաջիկա կյանքի միջին տևողության բարձրացմանը՝ նույնիսկ հաշվի առնելով բժշկական գիտության զարգացման հեռանկարային միտումները:

Ջարգացած երկրներում մանկամահացության ցուցանիշի մեծությունը տատանվում է 2.0 - 4.0 պրոմիլի սահմաններում, հետևաբար՝ հանրապետությունում այդ ցուցանիշը երկու անգամ բարձր է համապատասխան մակարդակից: Դա նշանակում է, որ ժողովրդագրական անվտանգության ապահովման համար պետք է աստիճանաբար նվազի մանկամահացության գործակիցի մեծությունը:

Անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ՝ նպատակաուղղված հանրապետությունում ըստ առանձին պատճառների մահացության ինտենսիվության կարգավորմանը: Ինչպես և նախորդ տարիներին, 2015 թ. ևս մահացության կառուցվածքում գերակշռել են արյան շրջանառության համակարգի հետ կապված հիվանդություններից (47.9%) և չարորակ նորագոյացություն-

⁶ Տե՛ս Հայաստանի ժողովրդագրական ժողովածու - 2015, էջ 25, 63:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 63, 98:

ներից (20.6%) մահվան դեպքերը: Ընդ որում, 2015 թ., մախորդ տարիների համեմատությամբ, նվազել են մարտողական հիվանդություններից, դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից մահացության դեպքերը, իսկ արյան շրջանառության համակարգի և շնչառական օրգանների հիվանդություններից՝ ավելացել են⁸:

Աշխատունակ տարիքի բնակչության հիվանդացությունների և մահացության բարձր մակարդակով պայմանավորված՝ նվազում է աշխատունակ տարիքի բնակչության, բանակ զորակոչվողների թիվը, ավելանում է ամուրիների, որբերի, ոչ լրիվ ընտանիքների, միայնակ ծերացածների թիվը: Բնակչության մահացության գործընթացի ոչ բարեհաջող միտումները նշանակալիորեն փոփոխելու են առաջիկա կյանքի միջին տևողության ցուցանիշի շարժընթացը:

Ժողովրդագրական ցուցանիշների քանակական մեծությունների նվազմանը զուգընթաց, նկատվում է որակական՝ հատկապես բնակչության ֆիզիկական, հոգեկան, սոցիալական առողջության պարամետրերի վատթարացում՝ հանգեցնելով հասարակության մտավոր ներուժի կորստի:

Տագնապալի գործոնների շարքին կարելի է դասել երեխա ունեցող և երեխա ունեցած տարիքի կանանց առողջության վատթարացումը: Ամեն հաջորդ սերնդի առողջության վատթարացումը երկրի անվտանգության հավանական վտանգներից է, որի հետևանքով նվազում է բնակչության վերարտադրողական առողջությունը և աշխատանքային ռեսուրսների որակը:

Երկրում ազգային անվտանգության իրական վտանգներից են ընտանիքներում երեխա ունենալու նորմայի և ընտանիքի կառուցվածքի անշրջելի փոփոխությունները:

ՀՀ-ում տնտեսական ճգնաժամը բնակչության կենսամակարդակի կտրուկ անկման, աղքատացման պատճառ դարձավ, որի հետևանքով ընտանիքները հայտնվեցին ծայրահեղ ծանր վիճակում: Աշխատող ամուսնական զույգի դեպքում, որը ստանում է միջին աշխատավարձի չափով վարձատրություն, մեկ երեխայի պարագայում, երբ լուծված չեն բնակարանային խնդիրները, պարզվում է՝ ընտանիքի միջին շնչային եկամուտը ցածր է նվազագույն սպառողական բյուջեի մեծությունից:

Հետևաբար՝ ներկայումս երեխաները դառնում են ընտանիքի աղքատության հիմնական գործոնը: Շատերը հրաժարվում են երեխաներ ունենալուց, կամ նրանց թվի սահմանափակումը դառնում է սոցիալական ինքնապաշտպանության հիմնական մեթոդը: Նշված պատճառով, ծնվածների կառուցվածքում, ոչ միայն նվազում է երկրորդ, երրորդ երեխաների տեսակարար կշիռը, այլ նաև, ժամանակի առումով, հետաձգվում է նույնիսկ առաջին երեխա ունենալու գործընթացը:

Այսպիսով՝ ամուսնական զույգերի՝ երեխաներ ունենալուց հրաժարվելը, կարելի է ասել, դառնում է միջոց՝ հակազդելու ընտանիքի կենսամակարդակի արագ տեմպերով նվազմանը: Հեռանկարում երիտասարդների թվի, տեսակարար կշռի նվազումը կարագացնի աշխատուժի ծերացումը, բացասաբար կանդրադառնա նրա որակի վրա, կստեղծի երկրի զինված ուժերի համալրման որոշակի դժվարություններ:

Կարևորագույն հիմնախնդիրներից է ընտանիքի անդամների պլանավորումը: Ցածր ծնելիության պարագայում նկատվում է հղիության ընդհատման

⁸ Տե՛ս Հայաստանի ժողովրդագրական ժողովածու - 2015 թ., էջ 20, 21:

թվի աճ: Հղիության ընդհատումը ընտանիքի պլանավորման հիմնական մեթոդներից է: Դրա թվի ավելացումը բացասաբար է անդրադառնում ոչ միայն բնակչության վերարտադրության ինտենսիվության, այլև կանանց վերարտադրողական առողջության վրա:

Ժողովրդագրական անվտանգության հիմնախնդիրներից է երկրի բնակչության ծերացման գործընթացը: Այդ ցուցանիշի փաստացի մեծությունը ինչպես սովորական, այնպես էլ ՄԱԿ-ի ԱՀԿ սանդղակային գնահատման չափանիշներով գնահատելիս կարող ենք ասել, որ ՀՀ բնակչությունը ծերացած է, ինչը պայմանավորված է ծննդի ինտենսիվության նվազմամբ, միգրացիայի բացասական մնացորդով, առաջիկա կյանքի միջին տևողության բարձրացմամբ և այլ գործոններով: Բնակչության ծերացման գործընթացին բնորոշ են տնտեսական, ժողովրդագրական, առողջապահական, ռազմական և բարոյահոգեբանական հետևանքներ, որոնց տվյալ հոդվածում չենք անդրադառնա: Միայն նշենք, որ ժողովրդագրական խնամառության կամ աշխատունակ տարիքի բնակչության ծանրաբեռնվածության ցուցանիշը, որը հաշվարկվում է մինչ աշխատանքային և աշխատանքային տարիքից բարձր բնակչության թվի և աշխատունակ տարիքի բնակչության թվի հարաբերության տվյալը 1000-ով բազմապատկելով, ՀՀ-ում վերջին տարիներին ունեցել է աճման միտում և 2015 թ. կազմել է 509 մարդ:

Ազգային անվտանգության իրական վտանգներից են հանրապետության քաղաքների և գյուղերի միջև ներքին միգրացիոն հոսքերի անհամամասնությունները, ոչ ռացիոնալությունը, ինչպես նաև արտաքին միգրացիայի բարձր ինտենսիվությունը, անօրինական միգրացիայի ծավալների աճը: Այս ամենի հետևանքով ՀՀ բնակչությունը կայուն տեմպերով նվազում է ոչ միայն առանձին տարածքներում, այլ նաև ամբողջ երկրի մասշտաբով: Այսպես՝ հանրապետության բնակչության թիվը 2015 թվականին, 1992 թ. համեմատությամբ, նվազել է շուրջ 634.7 հազար մարդով, այսինքն՝ ուսումնասիրվող ժամանակաշրջանում բնակչության հավելաճը միշտ ունեցել է տարեկան նվազման միտում այն դեպքում, երբ երկրի բնակչության բնական հավելաճը կազմել է 401.7 հազար մարդ⁹: Փաստորեն, երկրի բնակչությունը ուսումնասիրվող ժամանակաշրջանում նվազել է մեկ միլիոնից ավելի՝ հիմնականում պայմանավորված արտաքին միգրացիայի բարձր ինտենսիվությամբ, որն առայժմ ունի իներցիոն բնույթ: Այս խնդրի կարգավորման համար հանրապետությունում պետք է իրականացվի միգրացիոն ակտիվ քաղաքականություն:

Ժողովրդագրական անվտանգության հայեցակարգի իրացման հաջողությունները պետք է բխեն մշտական, նպատակաուղղված և արդյունավետ ժողովրդագրական և միգրացիոն քաղաքականությունների իրագործումից:

Առաջին հերթին հարկ է երկրում կատարելագործել ծննդի խրախուսման գործընթացը: Անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բավարար մակարդակ ապահովելու նպատակով անհրաժեշտ է ընտանիքներին փոխհատուցել անչափահաս երեխային խնամող աշխատունակ տարիքի չափատուղ ծնողներից մեկի «չափատաժ աշխատանքի» վարձատրությունը ոչ միայն համապատասխան աշխատավարձի չափով, այլև երեխայի ծննդի և համապատասխան դաստիարակության համար անհրաժեշտ լրացուցիչ ծախսումների մեծությամբ: Այդ նպատակով պետք է փուլ առ փուլ կատարելագործել ընտանիքներին տրամադրվող պե-

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 40:

տական նպաստների համակարգը, լրացուցիչ խրախուսել ընտանիքներում երրորդ և հաջորդ երեխաների ծնունդը:

Անհրաժեշտ է վերանայել և կարգավորել կանանց տրամադրվող նախա-ծննդյան և հետծննդյան արձակուրդների ժամկետների և վճարների չափերը. երեխայի ծննդից հետո կանանց երեք տարի հատկացվող արձակուրդի ժամանակաշրջանում նրանց վճարել ամսական աշխատավարձի որոշակի մեծություն՝ այդ տարիները համարելով աշխատանքային ստաժ:

Ընտանիքներում երեխաների թվից ելնելով՝ պետք է կարգավորել գանձվող և տարբեր նպատակներով ընտանիքներին տրվող հարկերի՝ մասնավորապես բնակարանների ծեռքերման հիփոթեքային վարկերի դրույքաչափերը: Առաջնային լուծում պահանջող խնդիրներից է առողջապահության համակարգի՝ հատկապես բժշկական ապահովագրության ոլորտի կարգավորումն ու բարեփոխումը:

Հանրապետության մարզերում և տարածաշրջաններում տնտեսական զարգացման մակարդակների համահարթման, միջին քաղաքների զարգացման, ինչպես նաև Երևանի բնակչության թիվն ի հաշիվ միգրացիոն գործընթացների նվազեցնելու արդյունքում կկարգավորվեն երկրի ներքին միգրացիոն տեղաշարժերը:

Օգտագործված գրականություն

1. Ֆահրադյան Մ., Գալստյան Կ., Ժողովրդագրական անվտանգության վիճակագրական ուսումնասիրության մեթոդաբանական հիմնահարցերը: ՀՊՏՀ 25-րդ գիտաժողովի նյութեր, Եր., 2015:
2. Աձաիձեիձ Օ.Ի., Էձիձիձոձ իձաձոձ իձ ձիձսձաձ ձ ձաձիձաձոձ-ձիձեձ ձձեձեձիձ ձ Ծիձիձեձիձ Օձաձաձոձեձ. Աձոձիձ Նաձաձիձիձ ձիձոձ-ձաձիձաձիձ թձեձ-ձիձիձ ձեձաձիձ, N 6 (107), 2015.
3. Աիձեձիձ Է.Ի., Իձեձաձիձաձ Ի.Ի., Փձոձոձիձ Է.Ի., Աձիձաձոձ-ձիձեձաձ ձիձաձոձ իձձեձիձիձ ձաձիձիձիձ ձաձիձիձիձ. Աձիձոձիձ ձիձիձ ձձիձ, N 4, 2000.
4. Աիձեձիձ Է.Ն., Աձիձաձոձ-ձիձեձ ձաձիձիձիձ ձ ձիձոձիձ իձ-ձեձիձիձ ձաձիձիձ ձաձիձիձիձ Ծիձիձ (Էձոձիձ, իձոձիձիձ ձ ձ-ձեձոձ ձիձիձ), Աձիձիձիձիձ, N 3-4 (42), 1998.
5. Ծիձիձիձ Է., ձաձիձ-ձիձեձ իձձիձ ձ ձաձիձ ձ ձաձիձիձ ձաձիձիձիձ, Աձոձ, N 10, 2000.
6. Կիձոձիձ Ի.Յ., Աիձիձաձ Ա.Ա., Էձիձիձ իձ.Ա. ձ ձ, իձոձիձիձ ձիձ-ձիձ ձաձիձաձ-ձիձիձ ձաձիձիձիձ ձ ձաձաձ ձիձիձիձ, Օձիձիձ ձ ձաձոձիձ, 2013.
7. Աիձիձ Ա.Ի., Էձիձիձ իձ.Ա., Նիձիձ Ի.Ա. ձ ձ, Աձիձաձ-ձիձեձ ձաձիձ Ծիձիձիձ Օձաձաձոձ ձ ձիձիձ ձիձիձ ձիձիձ. Ի., Ծոձիձ, 2015.
8. Ծիձիձիձ Է.Է., 20 ձաձ ձիձիձ ձ ձ Ծիձիձ. Ի., Կիձիձ ձիձ, 2014.

МАРТИН ФАГРАДЯН

Профессор кафедры статистики АГЭУ,
кандидат экономических наук

Система статистических показателей оценки демографической безопасности и основные вопросы её регулирования в Республике Армения.–

Демографическая безопасность является важнейшим элементом национальной безопасности, поскольку охватывает все сферы жизнедеятельности общества. В работе определено экономическое содержание понятий прав и угроз демографической безопасности. Обосновывается система статистических, демографических показателей, с помощью которых возможна научная оценка демографической ситуации и выявление ее основных проблем, выдвигается определенная концепция мероприятий по реализации демографической и миграционной политики.

Ключевые слова: демографическая безопасность, угроза, право, ситуация, концепция, система статистических показателей, политика, миграция, планирование семьи.

JEL: C4, C49, J11

MARTIN FAHRADYAN

Professor at the Chair of Statistics at ASUE
PhD in Economics

The System of Statistical Indicators Assessment of Demographic Security and Basic Issues of their Regulation in the Republic of Armenia.–

Demographic security is the most important element of national security since it covers all the areas of public lifestyle. The economic contents of demographic security threats and rights have been defined in the given paper. The statistical, demographic indicator system is substantiated here which makes it possible to assess and identify the basic issues of the demographic situation. Aiming at its regulating a concept of certain measures for performing demographic and migration policies has been proposed.

Key words: demographic security, damages, rights, concept, situation, system of statistical indicators, policy, migration, family planning.

JEL: C4, C49, J11